2126.7/163

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«19» 01 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0018-21

Ձեռնարկողը՝ ***«Զանգված» ՍՊԸ***
ք. Երևան, Պ. Սևակի փ. 8/2, 145 փարածք

Գործունեությունը՝ ***«Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցի վերակառուցման, լաբորատոր և կցակառույց մասնաշենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0018-21

<19> 01 2021թ.

Երևան քաղաքի «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցի վերակառուցման, լաբորատոր և կցակառույց մասնաշենքերի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Զանգված» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	ք Երևան, Նորք Մարաշ վարչական շրջան

Ներածական մաս. Գործունեության իրականացման վայրը՝ Երևան, Նորք Մարաշ վարչական շրջանի Արմենակ Արմենակյան փողոց, 153, «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցի տարածք:

Նախատեսվող գործունեության նպատակն է՝ բարելավել հիվանդների սպասարկումը և բարձրացնել բուժման արդյունավետությունը:

Նախագծման և կառուցապատման համար հիմք է հանդիսացել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի առաջադրանքը,

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ կազմված է յոթ մասնաշենքից (ընդհանուր տարածքն օժանդակ շինություններով՝ 8479.8 քմ): Կլինիկական հիվանդանոցի համալիրի ընդհանուր մակերեսը՝ 2.8 հա:Կենտրոնի առկա հիմնական մասնաշենքերն ունեն հետևյալ արտաքին չափերը.

-Հիվանդանոցի ստացիոնար ծառայությունները իրականացվում են երկու կլինիկական մասնաշենքերում, որից առաջինը՝ երկհարկանի մասնաշենքը, կառուցվել է 1960-ական թվականներին և զբաղեցնում է շուրջ 2450 քմ տարածք,

- Երկրորդը՝ եռահարկ մասնաշենքը կառուցվել է 1986թ. և զբաղեցնում է շուրջ 4835 քմ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

- մնացած հինգ օժանդակ շինությունները կառուցվել են 1930-ական թվականներին:

COVID-19 պայմանավորված համաճարակաբանական իրավիճակում կառուցվել և ներկայում գործում է մոդուլային տիպի հավելյալ 40 մահճակալ հզորությամբ հիվանդանոց՝ 6740 մ² մակերոսով, նախատեսված պացիենտների ընդունման և տեսակավորման համար:

«Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցի տարածքում նախատեսված է չորսհարկանի 4835մ² մակերեսով մասնաշենքի վերակառուցում, երկհարկանի կցակառույցի կառուցում՝ շուրջ 1600մ² մակերեսով և նոր լաբորատոր երկհարկանի մասնաշենքի կառուցում՝ շուրջ 750մ² մակերեսով: Ինֆեկցիոն հիվանդանոցային հիմնական ծառայությունների համար բժշկական սարքավորումների տրամադրում, ներառյալ ինտենսիվ և անհետաձգելի բուժօգնության, կենտրոնական ախտահանման, լվացքատան, ինչպես նաև ախտորոշման և լաբորատոր ծառայությունների: Կաթսայատան կառուցում և պահեստային դիզելային գեներատորի տեղադրում, բժշկական և գրասենյակային նոր կահույքի տրամադրում:

Կաթսայատանը կտեղադրվի երկու ժամանակակից գազային ջրաջեռուցիչ կաթսա, լրացուցիչ նախատեսվում է նաև պահեստային դիզելային գեներատոր: Կաթսայատանը կտեղադրվի տաք ջրի թերմոկաթսա:

Նոր շենքի կոմունալ համակարգերը կմիացվեն գործող քաղաքային համակարգերին, այդ թվում ՝ բնական գազի, ջրի, կոյուղու և էլեկտրական ցանցերի: Տաք ջիր հիմնական նոր խողովակաշարը կլինի ստորգետնյա, իսկ բնական գազի մատակարարումը՝ վերգետնյա:

Կիրականացվեն հիվանդանոցի տարածքի բարեկարգման աշխատանքներ (կանաչապատում, լուսավորություն, հիվանդանոցի մուտքի ճանապարհների բարեկարգում, ավտոկայանատեղի և այլն): Կանաչապատում իրականացվելու է միայն աշխատանքների ընթացքում խախտված առանձին հողակտորների վրա: Կանաչապատումը կիրականացվի միայն սիզամարգի տեսքով: Լրացուցիչ մակերես կանաչապատման համար չի նախատեսվում, քանի որ հիվանդանոցի տարածքը խիստ սահմանափակ է:

Բոլոր շինությունների շինարարական աշխատանքներն իրականացնվելու են միաժամանակ: Ըստ նշված բնութագրի ՍՆԻՊ 1.04.03-2008-ի նորմատիվներով նշված աշխատանքների իրականացումը հաշվարկված է 24 ամիս: Շին աշխատանքների իրականացման համար նախատեսվում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական: Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է բարեկարգել տարածքները: Տարածքների բարեկարգման համար կօգտագործվի նախօրոք հանված հողը: Հիվանդանոցի տարածքի այն հատվածը, որտեղ նախատեսված են նոր շիններ, գործնականում զուրկ է բուսահողից: Համապատասխանաբար բերրի հողի հանման և պահեստավորման պահանջ չկա: Բետոնային խառնուրդը կներկրվի բետոնատար մեքենայով համապատասխան մասնագիտացված կազմակերպությունից:

Նախատեսվող վերակառուցման աշխատանքների ժամանակ մեծածավալ քանդման աշխատանքներ չեն իրականացվելու: Հողային աշխատանքները /զանգվածների/ ծավալները ըստ նախնական հաշվարկների հետևյալն են՝ հանվող հողային զանգված՝ 3500մ³, ետլիցք՝ 1600մ: Աշխատանքների ավարտից հետո մնացորդային հողը՝ 1900մ³ կօգտագործվի տարածքի բարեկարգնման համար, իսկ շինարարական թափոնները՝ 260.0մ³, կտեղափոխվեն Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վաճառելով դրանք այլ կազմակերպություններից:

«Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցի վերակառուցման ժամանակ օգտագործվելու են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստրուկցիաներ, մետաղական կոնստրուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ շինհրապարակների տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար: Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրը օգտագործվելու է աշխատողների խմելու և կենցաղային նպատակների, ինչպես նաև փոշենստեցման համար:

Ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվում են գործող շինարարական նորմերի ու կանոնների և տեխնիկական պայմանների համաձայն:

«Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցը ներկայում ապահովված է ջրամատակարարման և կոյուղու համակարգերով:

Ջրատարում վթարների և վերանորոգումների ժամանակ ջրամատակարարման անընդհատությունը ապահովելու, ինչպես նաև ներքին հակահրդեհային ջրաքանակ ապահովելու համար նախատեսվում է պահուստային բաքի տեղադրում, որը միաժամանակ կարգավորող դեր է կատարում:

Շինարարական հրապարակում բացառել բետոնաշաղախային խառնուրդի պատրաստման գործընթացը: Համապատասխան մակնիշի բետոնախառնուրդի առաքումը դեպի հրապարակ կիրականացվի բետոնախառնիչիներով Երևան քաղաքին մոտ գտնվող բետոնաշաղախային հանգույցներից:

Նորք ինֆեկցիոն հիվանդանոցի տարածքում և շրջակայքում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ:

Ներկայացվող տարածքը չի առնչվում Երևան քաղաքում գրանցված մշակութային հուշարձանների, բնության հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների, կամ կենսաբազմազանության տեսակների հետ:

Գործունեության ենթակա տարածքում Կարմիր գրքում գրանցված կենդանիներ և բուսատեսակներ չեն հայտնաբերվել:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

-Շինարարական աշխատանքների /փոշեառաջացման աշխատանքներ/ ընթացքում իրականացնել ջրցան,

- սորուն նյութերի ժամանակավոր կուտակումները և շինհրապարակը ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ կանխարգելելու համար փոշու տարածումը,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում,
- գրունտի և սորուն նյութերի տեղափոխումն իրականացնել ծածկված թափքերով բեռնատարներով, - խուսափել անորակ վառելիքի օգտագործումից,

ՀՀ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- բետոնի խառնուրդը գնել համապատասխան մատակարարներից,

ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ բացառվեն մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

- տարածքի հոսքաջրերը միավորել մեկ բակային ցանցում և միացնել գոյություն ունեցող հեղեղատար ցանցին:
- շինարարական նյութերի և քսայուղերի ժամանակավոր պահեստները տեղադրել բետոնապատ
- մակերեսի վրա, որտեղ ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով,
- աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգել, վերականգնել և մաքրել՝ առաջացած թափոնները տեղափոխելով Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին,
- խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում խլացուցիչների տեղադրում,
- անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով

Պատճառաբանական մաս. Երևան քաղաքի Նորք Մարաշ վարչական շրջանի տարածքում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն և Աջափնյակ վարչական շրջանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:

Կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն, մասնավորապես, ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N263-Ն հրամանով

հաստատված՝ «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» ՀՀՇՆ30-01-2014 շինարարական նորմերի պահանջները:

-Քաղաքաշինություն նորմերի պահանջներից ելնելով պահպանել շինհրապարակում աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և պահպանումը:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Զանգված» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցի վերակառուցման, լաբորատոր և կցակառույց մասնաշենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ Հ. Մեսրոպյան